

Ուսուցման ձևերը՝ առկա, հեռակա.

Ձառկա. ուսուցման տևողությունը՝

4 տարի՝ բակալավրական կրթական ծրագրով,
2 տարի՝ մագիստրոսական կրթական ծրագրով:

Հեռակա. ուսուցման տևողությունը՝

5 տարի՝ բակալավրական կրթական ծրագրով,
2,5 տարի՝ մագիստրոսական կրթական ծրագրով:

Ուսման վարձը՝ 260 000-ից 585 000 դրամ
(պայմանավորված մասնագիտության ընտրությամբ)

ՀՊՄՀ գիտական գրադարանը ստեղծվել է 1922 թ.-ի սեպտեմբերի 30-ին, որտեղ այսօր հաշվարկվում է ավելի քան 600 000 միավոր գիրք:

Համալսարանում դասավանդում են ՀՀ ԳԱԱ 8 ակադեմիկոս, 11 թղթակից անդամ, 143 պրոֆեսոր, 294 դոցենտ:

Համալսարանում գործում է Համալսարան-գործատու համագործակցության կենտրոն,

որի նպատակն է աջակցել դիմորդներին, ուսանողներին, շրջանավարտներին խորհրդատվական, մասնագիտական կողմնորոշումներով և շրջանավարտների առաջընթացին ուղղված ծառայություններով, ձևավորել և զարգացնել անհրաժեշտ կարողություններ կարիերայում հաջողություններ ունենալու համար՝ համահունչ աշխատաշուկայի արդի պահանջներին:



ՀՊՄՀ-ում աստղագիտության ուսուցմանը մեծապես նպաստում է համալսարանի 1-ին մասնաշենքի հարթ տանիքին տեղադրված Մաքսուտով-Կասեգրեն համակարգի մենիսկային աստղադիտակն իր դիտողական գմբեթավոր աշտարակով: Փոքր աստղադիտարանի հանդիսավոր բացումը կայացել է 2004 թ. նոյեմբերին:

ՀՀ, 0010, Երևան, Տիգրան Մեծի պող., 17 շենք
Ընդհանուր բաժին՝ + (374 10) 59 70 49
www.armspu.am

**ՀԱՄԱԼՍԱՐԱՆ-ԳՈՐԾԱՏՈՒ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

402 սենյակ
Հեռ.՝ (+374) 010 59 22 62
Էլիասցե՝ uecc@armspu.am
<http://www.facebook.com/groups/CCARSP/>

Ուղեցույցը մասրասվել է Համալսարան-գործատու համագործակցության կենտրոնի կողմից



**ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ
ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**



armspu.am



Հայկական պետական մանկավարժական համալսարանը հիմնադրվել է 1922 թվականի նոյեմբերի 7-ին, իսկ 1948 թվականից կրում է մեծ լուսավորիչ ու մանկավարժ Խաչատուր Աբովյանի անունը:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

- Համալսարանի խորհուրդ
- Համալսարանի գիտական խորհուրդ
- Համալսարանի ռեկտոր

Ռեկտորի գլխավորությամբ գործում է ռեկտորատը:

Համալսարանի կառավարման բարձրագույն մարմինը Համալսարանի խորհուրդն է, որի նախագահն է ՀՀ Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակյանը:

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

- Արհեստակցական կազմակերպություն
- Ուսանողական խորհուրդ
- Ուսանողական գիտական ընկերություն

Համալսարանում առկա և հեռակա ուսուցմամբ սովորում է շուրջ 12 000 ուսանող:

Համալսարանում սահմանված է 25 անվանական կրթաթոշակ:

Համալսարանին կից գործում են հիմնական դպրոց (Վ. Թոթովենցի անվան թիվ 57) և հենակետային վարժարան (ավագ դպրոց): Ավագ դպրոցում աշակերտներն իրենց ուսումը կարող են շարունակել հետևյալ հոսքերում՝

- Հումանիտար (լրագրություն, հոգեբանություն)
- Մշակութային (նկարչություն-դիզայն)
- Բնագիտամաթեմատիկական

Նախապատրաստական բաժին

Գիմորդների համար կազմակերպում է՝

- դասընթացներ բոլոր մասնագիտությունների գծով (նոյեմբերից հունիս),
- խորհրդատվական պարապմունքներ՝ սոցիալ-մշակութային մասնագիտությունների գծով (մայիս-հունիս):

Տեղեկությունների համար զանգահարել (010) 55 60 30 (ներքին՝ 167) հեռախոսահամարով



ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը հանրապետության մանկավարժական կադրեր պատրաստող մայր բուն է, որը 2004 - 2005 ուստարվանից իրականացնում է եռաստիճան (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա) կրթական համակարգ՝ համապատասխան ուսումնական պլաններով ու ծրագրերով:

ՄԱՍՈՒԼԸ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը հրատարակում է «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթ, «Ապագա մանկավարժ» ուսանողական ամսագիր, «Հայագիտական հանդես», «Գիտական տեղեկագիր», «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ», «Հատուկ մանկավարժություն և վերականգնողական հոգեբանություն» պարբերականները:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ

- ☞ Մոսկվայի քաղաքային պետական մանկավարժական համալսարան
- ☞ Ֆինլանդիայի Օուլուի համալսարան
- ☞ Բուլղարիայի Վելիկո-Տիրնովոյի համալսարան
- ☞ Սիրիայի Համազգային հայագիտական կենտրոն (Հայէսյ)
- ☞ Ամստերդամի պետական համալսարան (Նիդերլանդներ)
- ☞ Պրահայի Կառլովի համալսարան (Չեխիա)
- ☞ Գլազգոյի Կալեդոնիա համալսարան (Շոտլանդիա)
- ☞ Ռուսաստանի պետական հումանիտար համալսարան (Մոսկվա)
- ☞ Սուրբ Կլիմենտ Օխրիդսկու անվան Սոֆիայի պետական համալսարան (Բուլղարիա)
- ☞ Ինֆորմատիկայի և ռադիոէլեկտրոնիկայի Բելառուսի պետական համալսարան
- ☞ Իլյայի պետական համալսարան (Թբիլիսի)
- ☞ Բոգդան Խմելնիցկու անվան չեքոսլովակյան ազգային համալսարան
- ☞ Թուրինի համալսարան
- ☞ Թուրինի գեղարվեստի ակադեմիա
- ☞ Մ.Պ. Դրագոմանովի անվան Ուկրաինայի ազգային մանկավարժական համալսարան
- ☞ Պ.Լ. Շուպիկի անվան հետբուհական կրթության ազգային բժշկական ակադեմիա
- ☞ Մոսկվայի քաղաքային հոգեբանամանկավարժական համալսարան
- ☞ Գրիմի հումանիտար համալսարան
- ☞ Սանկտ Պետերբուրգի պետական ճարտարագիտատնտեսագիտական համալսարան